Վահան ի մեծն Արգինա (ի գաւառին Ձիրակայ, մերձ ի քաղաքն Անի, յեղբ Ախուրեան գետոյ։

41)—Յոդ. ԻԱ «Ի թուականութեանս Հայոց ՆԼԲ. 983-984 մեռաւ Հայրապետն Հայոց Վահան . . . և ձեռնադրեցին յաթոռ Կաթուղիկոսութեան Հայոց զՏէր Ստեփաննոս . . իսկ գլուխ ժողովոյն էր կաթուղիկոսն Աղուանից Տէր Յովհաննէս. ի ժամանակս Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց արքայից . . . ևն։

89.—Յոդ. ԽԹ «Եւ յայնժամ թագաւորն և իշխանքն Հայոց . . . կամեցան զարձուցանել զՏէր Պետրոս յաթոռ իւր. և նա ոչ յանձն առնոյր . . . յայնժամ զրեաց թագաւորն թուղթ յԱղուանս, և կոչեցին զՏէր Յուսէփ Կաթուղիկոսն Աղուանից, զոր լուեալ Տէր Յուսէփ՝ առնու զեպիսկոպոսունս Աղուանից և գայ ի հաստատութիւն Տէր Պետրոսի ի քաղաքն Անի յամի Տեառնէն 1036։

92)—Յոդ. ԾԳ· «Յայսմ ժամանակի (1040-1041. ՆՀԹ.) զօրաժողով արար մեծ ամիրայն Պարսից Ապուսուար իբրեւ 150 հազար զազգն անօրինաց, և մեծաւ սրտմտութեամբ յարձակեալ կայր ի վերայ Քրիստոնէից, և դառնաշունչ բարկութեամբ մտաւ յաշխարհն Աղուանից և բազում վիշտ էած հաւատացելոց, և Դաւիթ Անհողին[1]) երկուցեալ ի բազմութենէ զօրացն այլազգեաց՝ ոչ ելանէր ի պատերազմ։ Իսկ անօրէն Ապուսուար էառ զրազում գաւառս և թեմարերդս զորք հարիւր, և տարի մի կացեալ անդ՝ արար իւր հնազանդ զմեծ մասն աշխարհին, և կամեցաւ գալ ի վերայ Դաւթի, յայնժամ անճարացեալ Դաւթի յուղարկէր առ թագաւորն Հայոց Յովհաննէս՝ որ նստէր յԱնի, օգնել ինքեան . . . և լուեալ զայս Յովհաննէս յուղարկէր Դաւթի արս երեք հազար. Նոյնպէս և Կապանին (Սիւնեաց) թագաւորն տայր արս երկու հազար . . . և Ափխազաց թագաւորն տայր զօրս չորս հազար. և ինքն Դաւիթ ժողովեալ զիւր զօրսն իբրեւ տասն հազար։ Յուղարկեաց առ Կաթուղիկոսն Աղուանից Տէր Յովսէփ և ասէր "այս ազգն անօրինաց վասն Քրիստոնէական հաւատոց գան ի վերայ մեր, և կամին

---

[1]) Դաւիթ անհողին է որդի Գուրգենայ Բ. որդւոյ Աշոտոյ ողորմածի։